

ԱՍՏՈՒԺՈՒՆ ԹԷ ՄԸՄՈՆԱՅԻՆ

Հ. Ն. Տօլստոյի

«Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մարմնալիս»:

(Դուկ. ԺԶ, 16.)

«Որ ոչ ընդիս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ»:

(Մատթ. ԺԲ. 90).

Ամենաբերրի հողերի ահագին տարածութիւններ, որոնց արդիւնքով միլիօնաւոր աղքատ ընտանիքներ կարող էին կերակրուել, նուիրուած են ձխախոտի, խաղողի, դարու և գլխաւորապէս հաճարի ու դեղատնայնի մշակութեան, որոնցից մեծ մասամբ պատրաստուած են ողելից խմիչքներ. գինի, գարեջուր և, ամենից աւելի, օղի:

Միլիօնաւոր բանուորներ, որոնք կարող էին մարդկանց համար օգտակար գործեր կատարել, զբաղուած են վերոյշեալ խմիչքների պատրաստութեամբ: Հաշուած է, որ Անգլիայում բոլոր բանուորների մի տասներորդ մասը զբաղուած է օղու և գարեջրի պատրաստութեամբ:

Ինչ հետեանքներ են առաջանում ձխախոտի, գինու, օղու, գարեջրի պատրաստութիւնից ու գործածութիւնից:

Մի հին պատմութիւն կալ մէկ միայնակիացի մտախն, որը իրր թէ վիճում է սատանայի հետ, թէ չի թողնիլ նորան իւր խուցը մտնի. իսկ եթէ թողնի, պատրաստ է կատարելու նորա առաջարկութիւնը: Այն ժամանակ սատանան վիրաւորուած ազգաւի տեսք ընդունելով, արիւնոտ թեր կախ ձգածք սկսում է թռչկոտել միայնակեացի խցի դրան մօտ: Միայնա-

կեացը խղճում է ազգաւին և իւր խուցը տանում: Այդ կերպով սատանան մտնելով խուցը՝ առաջարկում է միալնակեացին ընտրելու հետեւեալ երեք լանցանքներից մէկը. սպանութիւն, շնութիւն կամ արբեցութիւն: Նա ընտրում է արբեցութիւնը՝ մտածելով թէ գորանով միմիայն ինքն իրան ֆեասած կը լինի: Բայց երբ նա արբում է, բանականութիւնը կորցնելով, գնում է գիւղ և այնտեղ գալթակղուելով մի կնոջից՝ շնանում է և ապա ուզենալով պաշտպանուել տուն վերադարձող ամուսնու լարձակումից՝ սպանում է նորան:

Այսպէս են նկարագրում արբեցութեան հետեւանքները հին առակի մէջ և իսկապէս հէնց այդպէս էլ են ոգելից խմիչքների գործածութեան հետեւանքները: Շատ քիչ է պատահում, որ գողը կամ մարդասպանը չխմած դրութեամբ կատարէ իւր չարագործութիւնը: Դատաստանատների գործերից երևում է, որ չարագործութիւնների իննը տասներորդ մասը կատարւում է արբած ժամանակ: Թէ չարագործութիւնների մեծամասնութիւնը առաջանում է արբեցութիւնից, գորան ամենաակնյալանի ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ Ամերիկայի մի քանի նահանգներում, ուր խապառ արգելուած է գինու և ամեն տեսակ ոգելից խմիչքների մուտքն ու վաճառումը, չարագործութիւնները, համարեալ թէ, վերջացած են: չկալ գողութիւն, աւադակութիւն, սպանութիւն և բանտերը մնում են դատարկ: Այս է ոգելից խմիչքների գործածութեան մի հետեւանքը:

Միւս հետեւանքն այն վնասակար աղդեցութիւնն է, որ անում է ոգելից խմիչքների գործածութիւնը մարդկանց առողջութեան վերաջ: Բացի նրանից, որ ոգելից խմիչքների գործածութիւնից այնպիսի տանջող հիւանդութիւններ են առաջանում, որոնք միմիայն խմողներին են լատուկ և որոնցից շատ ժարդիկ են մեռնում, նկատուած է նաև, որ խմող մարդիկ տկարանալով սովորական հիւանդութիւններով, աւելի դժուարութեամբ են առողջանում: Այնպէս որ, կեանքը ապահովագրելու ժամանակ՝ ապահովագրական ընկերութիւնները միշտ աւելի են գնահատում չխմողների կեանքը քան՝ խմողներինը:

Այս է ոգելից խմիչքների գործածութեան միւս հետեւանքը:

Երբորդ և ամենասարսափելի հետևանքը ալն է, որ խմիչ-
քը բթացնում է մարդկանց բանականութիւնն ու խիղճը. մար-
դիկ գինու և օղու գործածութիւնից հետզհետէ աւելի կոպտա-
նում, լիմարանում և չարասիրտ են դառնում:

Ոգելից խմիչքներէ գործածութիւնից թնչ օգուտ կալ,
Ոչինչ:

Գինու, օղու, գարեջրի պաշտպանները հաւատացնում էին
առաջ, որ ալդ խմիչքները առողջութիւն և ուժ են տալիս
մարդուն, տաքացնում և ուրախացնում են: Բալց ալժմ ար-
դէն աւելիճելի կերպով ապացուցուած է, որ ալդ սխալ է: Ո-
գելից խմիչքները առողջութիւնը աւելացնել չեն կարող, ո-
րովհետև իրենց մէջ զօրեղ թոյն՝ ալկօհօլ են պարունակում,
իսկ թոյնի գործածութիւնը միմիայն վնաս կարող է բերել:

Թէ օղին ու գինին մարդուն ուժ չեն տալիս, ապացու-
ցուած է բաղմիցս նաև համեմատելով ամիսների և տարիների
ընթացքում խմող ու չխմող՝ հաւասարապէս լաւ վարպետների
աշխատանքը. միշտ հետևանքը ալն է եղել, որ չխմողը աշխա-
տել է և՛ աւելի, և՛ լաւ, քան խմողը: Այն զօրքերի մէջ, ո-
րոնց արշաւանքի ժամանակ օղի է տրուում, միշտ թոյլեր ու
չեւ մնացողներ աւելի են լինում, քան նրանց մէջ, որոնց
օղի չի տրուում:

Ապացուցուած է նաև, որ գինին ու օղին չեն տաքաց-
նում, որ դոցանից առաջացած տաքութիւնը երկար չի մնում
և որ մարդ կարճ ժամանակ տաքանալուց յետոյ, աւելի է մըր-
սում. ախպէս որ երկարատև ցրտին խմողը աւելի դժուար է
գիմանում, քան չխմողը: Ամեն տարի ցրտահար եղածներից
չափերը սառչում են ալն պատճառով, որ նախ իրանց տա-
քացնում են գինով կամ օղիով:

Թէ գինու և օղու առաջացրած ուրախութիւնը իսկական
ուրախութիւն չէ, ապացուցանելու հարկ չկալ: Ամեն ոք գի-
տէ, թէ ինչ է արեւուց առաջացած ուրախութիւնը: Բաւա-
կան է միայն տեսնել թէ տօներին քաղաքներում գինետնե-
րի մէջ ինչ է կատարուում և գիւղերում ինչեր են անում տօ-
ներին, հարսանիքներին և կնունքներին: Արքածութիւնից ա-
ռաջացած ուրախութիւնը միշտ վերջանում է հալոյանքով,
կռուով, վիրաւորանքով, ամեն տեսակ չարագործութիւններով
և մարդկային արժանապատուութեան ստորացմամբ:

Գինին ու օղին չեն տալիս մարդկանց առողջութիւն,

ով, տաքութիւն և ոչ-էլ ուրախութիւն, ալ միմիայն վնաս։
Նա ուրեմն պէտք էր սպասել, որ ամեն մի խելքը գլխին և
բարի մարդ ոչ միայն ինքը հրաժարուէր ողբելից խմիչքներ
գործածելուց և ուրիշներին հիւրասիրելուց, ալ և ամեն ջանք
գործ դնէր վերջացնելու այս սնպէտք և վնասակար թոյնի
գործածութեան սովորութիւնը։

Բայց զժաղդաբար ալդպէս չէ լինում։ Մարդիկ այնպէս
կապուած են հին սովորութիւններին հետ և արնքան զժուար
են ձեռք վերցնում նրանցից, որ մեր ժամանակում կան շատ
և շատ բարի, լաւ և խելօք մարդիկ, որոնք ոչ միայն չեն
հրաժարուում ողբելից խմիչքների գործածութիւնից և ուրիշնե-
րին հիւրասիրելուց, ալ և ամեն կերպ պաշտպանում են այս
սովորութիւնը։

«Խոտելին գինին չէ, ասում են նրանք, ալ արեցու-
թիւնը։ Դաւիթ մարգարէն ասել է. «գինի ուրախ առնէ
զմարդը»։ Քրիստոս Ղալիլիայի Կանա քաղաքում օրհնեց զի-
նին։ Եթէ չիմանք, կառավարութիւնը կը զրկուի իւր ամե-
նազխատոր եկամուտից։ Առանց գինու չի կարելի տօներ կա-
տարել, հարսանիք, կնունք անել, Զի կարելի չիմել առ ու
ծախի ժամանակ, թանկագին հիւր ընդունելիս»։ «Մեր ծանր
աշխատանքը և կարիքը ստիպում է մեզ խմել», ասում է բա-
նուոր մարդը։ Եթէ մենք խմում ենք միմիայն պատահած
ժամանակ և մեզ չենք կորցնում, դորանով մենք ոչ ոքի վնաս
չենք տալիս, ասում են նիւթապէս ապահով մարդիկ։ «Խմելով
սենք ոչ ոքի վնաս չենք տալիս, բացի մեզնից. իսկ եթէ մեզ
վնաս ենք տալիս, ալդ մեր գործն է. մենք չենք ուզում ու-
րիշներին խրատել և ոչ էլ նրանցից խրատ լսել. մեզնով չէ
սկսուել և մեզնով էլ չի վերջանալ», ասում են թեթեամիտ
մարդիկ։

Այսպէս են ասում տարբեր կարողութեան և հասակի խը-
մող մարդիկ, աշխատելով արդարացնել իրենց։ Բայց այս ար-
դարացումները, որ գուցէ մի քանի տասնեակ տարիներ սորա-
նից առաջ նշանակութիւն ունենալին, ալժամ բոլորովին ան-
տեղի են։ Այդպէս կարելի էր ասել այն ժամանակ, երբ ամենքն
էլ կարծում էին, թէ ողբելից խմիչքների գործածութիւնը մի
անվնաս զուարճութիւն է։ Թէ ալ խմիչքները առողջութիւն
և ոյժ են տալիս մարդուն. երբ դեռ չգիտէին, որ գինին ու-
օղին իրենց մէջ վնասակար թոյն են պարուսակում։ Նրբ դեռ

մարդիկ անտեղեակ էին նաև արեւցութեան ալն սոսկալի հե-
տեանքներին, որոնք այժմ ամենքին լալտնի են:

Այդպէս կարելի էր ասել ալն ժամանակ, երբ դեռ չկալին-
ալն հարիւրաւոր և հաղարաւոր մարդկալին զոհելը, որոնք
մեռնում են անժամանակ և չարաչար տանջանքներով, որով-
հետև սովորել են գործածել ոգիւից խմիչքներ և ալլ ևս չեն
կարողանում լետ կանգնել այդ սովորութիւնից: Հեշտ էր ասե-
լը, թէ գինին մի անմիտա զուարճութիւն է, երբ դեռ մենք
չէինք տեսնում ալն հարիւրաւոր և հաղարաւոր քաղցած ու
տանջուած կանանց և երեխաներին, որոնք տառապում են
միմիալն ալն պատճառով, որ իրենց ամուսիններն ու հայրերը
սովորել են գինի և օղի խմել: Հեշտ էր այդպէս ասելը, քա-
նի դեռ մենք չէինք տեսնում ալն հարիւրաւոր ու հաղարա-
ւոր չարագործներին, որոնք լցնում են բանտերը, աքսորւում,
տաժանակիր աշխատանքի են դատապարտւում և ալն կորստի
մատնուած կանանց, որոնք այդ դրութեան մէջ են ընկել
միմիալն գինու և օղու շնորհիւ: Կարելի էր այդպէս ասել,
քանի դեռ մենք չէինք իմանում, թէ հարիւր հաղարաւոր
մարդիկ, որոնք կարող էին ապրել չլուրսիութիւն իրենց և
ուրիշների, կորցնում են իրենց ուժերը, խելքը և հոգին մի-
միալն ալն պատճառով. որ ոգիւից խմիչքներ գոլութիւն ու-
նին և նոքա իրենց տուել են խմիչքի:

Ուստի և մեր ժամանակում ալ ևս չի կարելի ասել, թէ
գինի և օղի խմել կամ չխմել մասնաւոր գործ է, թէ մենք
միտաակար չենք համարում խմիչքի չափաւոր գործածութիւնը
և չենք կամենում ուրիշին խրատել կամ ուրիշներից խրատ
լսել, թէ մեզնով չէ սկսուել, մեզնով էլ չէ վերջանալ: Այժմ
արդէն այդպէս չի կարելի ասել. խմիչք գործածել կամ չգոր-
ծածելը մեր ժամանակում ընդհանուր գործ է և ոչ թէ մաս-
նաւոր:

Այժմ բոլոր մարդիկ, ուզեն թէ չուզեն իրենք՝ այդ մի
և նոյն է, բաժանուած են երկու բանակի. մի բանակ կռւում
է խօսքով և գործով ոգիւից խմիչքների գործածութեան դէմ՝
գինի և օղի չգործածելով և ուրիշին չհարասիրելով. միւսը՝
քաջալերում է խօսքով և որ զլիաւորն է, գործով ոգիւից
խմիչքների գործածութիւնը: Այս կռիւը գոլութիւն ունի ալժմ
բոլոր պետութիւնների մէջ և արդէն քսան ասարի է, որ ա-
ռանձին եռանդով մղւում է Ռուսաստանում և Նիթէ չիմանալիք:

մեղք չէր համարուիլ ձեզո, ասում էր Քրիստոս: Այժմ մենք գիտենք ինչ ենք անում և ում ենք ծառայում գինի և օղի գործածելով և ուրիշներին հիւրասիրելով: ապա ուրեմն, իմանալով գինու և օղու գործածութեան մեղք լինելը, եթէ մենք շարունակում ենք խմել և ուրիշներին հիւրասիրել, ալ ևս ոչ մի կերպ չենք կարող արդարանալ:

Եւ թող չասեն, թէ կան դէպքեր երբ չի կարելի չխմել և չհիւրասիրել, օր. տօներին, հարսանիքներին և ուրիշ նման դէպքերում, թէ ակապէս են անում ամենքը, թէ ակապէս են արել մեր հայրերն ու պապերը և հետևապէս մենք չենք կարող բացառութիւն կազմել ամենքից: Այդ ճշմարիտ չէ. մեր պապերն ու հայրերը հրաժարուել են ալն չար և վնասակար սովորութիւններից, որոնց շնաստակարութիւնը ակներև է դարձել նոցա համար. մենք էլ նոյնպէս պարտաւոր ենք հրաժարուել ակն չարիքից, որ ակներև է դարձել մեր ժամանակում: Իսկ թէ մեր ժամանակում գինին և օղին դարձել են մի սոսկալի չարիք, ալ դժասին ոչ մի կասկած չի կարող լինել: Լաւ իմանալով, որ ոգելից խմիչքների գործածութիւնը հարկւր հաղարաւոր մարդկանց կորստի մատնող մի չարիք է, ինչպէս կարող եմ տօներին, կնունքի կամ հարսանիքի ժամանակ ինձ մօտ հաւաքուած բարեկամներիս հիւրասիրել ալ չարիքով:

Ամեն քան միշտ ալնպէս չի եղել, ինչպէս ալժմ, ալ ամեն ինչ փոխուել է վատից դէպի լաւը և փոխուել է ոչ ինքնիրեն, ալ ալն մարդկանց շնորհիւ, որոնք հետեւել են իրենց բանականութեան պահանջներին ու խղճի ձայնին: Եւ ալժմ մեր բանականութիւնն ու խիղճը լամաւ կերպով պահանջում են մեղից, որ թողնենք գինի և օղի խմելու և ուրիշներին հիւրասիրելու շնաստակար սովորութիւնը:

Սովորաբար դատապարտութեան և արհամարհանքի արժանի են համարում ակն արբեցողներին, որոնք զինեմներում և ճաշարաններում խմում են խելքը կորցնելու չափ և արդէն ալնպէս են սովորել գինու և օղու, որ լեւ կանգնել չեն կարողանում և բոլոր ունեցածը խմիչքի են տալիս: Իսկ ակն մարդիկ, որոնք խմում են տանը ամեն օր չափաւոր կերպով և հիւրասիրում են զինով իրենց հիւրերին ամեն մի ընդունուած դէպքում, համարում են վատ բան չանող, լարգելի ու լաւ մարդիկ: Ալն ինչ հէնց ակդ տեսակ մարդիկ արբեցողներից աւելի են արժանի դատապարտութեան:

Արեւցողները ալդ վիճակին են հասել միմիայն այն պատճառով, որ չհարբողները, իրենց չմշասելով, սովորեցրել են նրանց խմել, գալթակղեցրել են նրանց իրենց օրինակով։ Արեւցողները երբէք խմող չէին դառնալ, եթէ չտեսնէին ամենքից լարդուած, պատուաւոր մարդկանց զինի և օղի խմելիս և ուրիշներին հիւրասիրելիս։ Գեռես երբէք զինի չխմած պատանին նորահամն ու ազդեցութիւնը խմանում է տօներին, հարսանիքներին ալդ ամենքից լարդուած, թէ և չհարբող, բալդ որոշ դէպքերում խմող և ուրիշներին հիւրասիրող, մարդկանց մօտ։

Ապա ուրեմն, ով որ խմում է զինի, թէպէտ և չափաւոր, և ընդունուած դէպքերում ուրիշներին հիւրասիրում, մեծ մեղք է դործում։ Դրանով նա գալթակղեցնում է ալիպիսիներին, որոնց իրաւունք չունի գալթակղեցնելու, որոնց համար ասուած է. «վնի նրան, ով կը գալթակղեցնէ ալս փոքրիկներէ մէկին»։

Ասում են. մեղնով չէ սկսուել, մեղնով էլ չի վերջանալ։ Ո՛չ, մեղնով էլ կը վերջանալ, եթէ միայն հասկանանք, որ ամեն մէկիս համար զինի խմել կամ չխմելը մի անտարբեր գործ չէ, որ ամեն անգամ մեր գնած մի շիշ՝ կամ խմած մի բաժակ զինով մենք ծառայում ենք այն զարհուրելի սատանայական գործին, որի շնորհիւ փշանում են մարդկալին ամենալաւ ուժերը, իսկ ընդհակառակը, հեռու պահելով մեզ զինուց և տօնի, հարսանիքի, կնունքի ժամանակ զինի գործածելու անմիտ սովորութիւնից, մի շատ կարևոր գործ, հոգն, Աստուծո՛ր գործ կատարած կը լինինք։ Միմիայն թէ հասկանանք ալս ամենը և մեղնով էլ կը վերջանալ արեւցողութիւնը։

Ուստի և, ով էլ որ լինես, ընթերցող, կեանքի համար նոր պատրաստուող պատանի, թէ արդէն քեզ համար կեանք ստեղծած հասուն մարդ, տանտէր թէ տանտիկին, կամ արդէն տարիքն առած ծերունի, հարուստ թէ աղքատ, լալտնի թէ անլալտ ոք, ով էլ որ լինիս, չես կարող ալլես կանգնել երկու բանակի մէջտեղում, դու անպատճառ պէտք է ընտրես երկուսից մէկը. կուուել արեւցողութեան դէմ կամ պաշտպանել նորան, ծառայել Աստուծուն կամ մամոնային։

Եթէ դեռ զինու համը չառած և նորա թո՛ղնով չթունաւորուած մի պատանի ես, իմացի՛ր դնահատել քո անարատ և գալթակղութիւնից աղատ լինելդ։ Եթէ մի անգամ տեղի տաս գալթակղութեան, ալնուհետև դժուար կը լինի աղատուել

նրանից, Մի հաւատար թէ գինին կաւելացնի ուրախութիւնդ։
 Քո հասակին լատուկ է իսկական, ճշմարիտ ուրախութիւն,
 իսկ գինին իսկական անմեղ ուրախութիւնդ կը փոխարինէ
 խմողի անմիտ և անմաքուր ուրախութեամբ։ Զգուշացիր գի-
 նուց գլխաւորապէս ալն պատճառով, որ քո հասակում դժուար
 է դիմադրել ընդհանրապէս բոլոր զալթակղութիւններին, իսկ
 գինին կը թուլացնէ քո մէջ ալդ հասակում ամենահարկաւոր
 բանը՝ բանականութեան ոլոր, որ դիմադրում է զալթակղու-
 թեանց։ Արեւելի դու ալնպիսի բան կանես, ինչ որ, չհարաւ
 ժամանակ, մտքումդ անգամ չէիր անցկացնիլ։ Ինչու ուրեմն
 քեզ պէտքէ ենթարկես ալդպիսի մի սարսափելի վտանգի։

Եթէ հասած մարդ ես և նոր ես սկսում ոգելից խմիչքներ
 գործածել կամ արդէն սովորութիւն ես դարձրել քեզ համար,
 քանի դեռ ժամանակ կայ, շտապիր շուտով ձեռք վերցնելու
 նրանից, թէ չէ, մէկ էլ կը տեսնես, որ ալդ սովորութիւնը
 արդէն չաղթել է քեզ և ալն ժամանակ դու էլ կը դառնաս
 անդարձ կորած արեւցողներից մէկը։ Նոքա բոլորն էլ քեզ
 պէս են սկսել։ Եթէ դու մինչև անգամ կարողանալիր ամբողջ
 կեանքիդ ընթացքում ոգելից խմիչքների չափաւոր գործածու-
 թեան սահմանից դուրս չդալ և արեւցող չդառնալ, ալնուամենա-
 իւ շարունակելով գինի խմել և ուրիշներին հիւրասիրել գտեցէ
 դրանով արեւցող դարձնես փոքր եղբորդ, կնոջդ, երեխաներիդ,
 որոնք կօրող են քո չափ ոլթ չուենալ միշտ չափաւորութեան
 սահմանի մէջ միալու համար։ Եւ որ գլխաւորն է, լաւ հաս-
 կացիր, որ քեզ վերալ է ընկնում, իբրև հասունացած մարդու,
 քո ընտանիքի անդամներին առաջնորդելու պարտականու-
 թիւնը։ Ապա ուրեմն, եթէ դու գիտես, որ գինին ոչ մի օգուտ
 չի բերում և մարդկանց մեծ վնաս է հասցնում, ուստի և ոչ
 միայն չպէտքէ ստրկօրէն կրկնես ալն, ինչ որ արել են նա-
 խորդներդ՝ գինի առնել, խմել և ուրիշներին հիւրասիրել, ալ
 ընդհանրապէս պարտաւոր ես փոխարինելու ալդ վնասակար
 սովորութիւնը մի ուրիշ լաւ սովորութեամբ։

Մի վախեցիր, տօներին, հարսանիքներին, կնունքներին
 գինի գործածելու սովորութեան վերացումը շատ էլ չի վիրա-
 ւորիլ ու վրդովիլ մարդկանց։ Շատ տեղերում արդէն սկսել են
 ալդպէս առնել, գինով հիւրասիրել փոխարինելով անուշ ուտե-
 լիքներով և անվնաս (ոչ ոգելից) խմիչքներով։ և մարդիկ, ալն
 էլ ամենից լիմարները, միմիայն սկզբներում տարօրինակ են

համարում արդ, բայց շուտով սովորում են և հաւանութիւն տալիս:

Եթէ ծեր մարդ ես, այն հասակում, երբ արօր կամ վաղը, հաշիւ պէտք է տաս Աստուծուն թէ Բնչպէս ես ծառայել նորան, և դու վտխանակ երիտասարդ, անվորձ մարդկանց լեռ կանգնեցնելու գինուց, որի միասը կեանքիդ ընթացքում անշուշտ տեսած կը լինիս, գալթակղեցնես մերձաւորներիդ քո օրինակով, գինի խմելով և ուրիշներին հիւրասիրելով, մեծ մեղք գործած կը լինիս:

«Վճի աշխարհին գալթակղութեանց երեսից, գալթակղութիւնները պէտք է դան. բայց վճի այն մարդուն՝ ում ձեռքով կը գալ գալթակղութիւնը:

Միայն թէ մենք լաւ հասկանալինք, որ գինու գործածութեան խնդրում միջին տեղ չկալ, և ուղենք-չուղենք պէտք է ընտրենք երկուսից մէկը. ծառայել Աստուծուն կամ մամոնային:

«Ով ինձ հետ չէ, հակառակ է ինձ. և ով չի ժողովում ինձ հետ, ցրւում է» (Մատթ. ԺԲ, 30)

Քարդմ. ՄԱՄԱՐԷՆ Վ.

